ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի օգոստոսի 25-29-ը Մալայզիա (Կուալա Լումպուր) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝** Կարեն Ավանեսյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի Սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության պետ:
3. **Գործուղման վայրը, ժամկետները՝** Մալայզիա (ք. Կուալա Լումպուր) օգոստոսի 25-29-ը:
4. **Հրավիրող կողմը՝** Եվրոպական միության գլոբալ սփյուռքի հարթակի և Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոն: ՀՀ Վարչապետի 2025 թվականի օգոստոսի 22-ի N 736-Ա որոշման հիման վրա:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային, ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

«Սփյուռքի հմտությունների փոխանցման և տաղանդների ներգրավման ուղղությամբ տարածաշրջանային փորձի փոխանակում» թեմայով միջազգային ժողովին որպես բանախոս մասնակցություն, ժողովին մասնակցող երկրների ներկայացուցիչների հետ սփյուռքի վերաբերյալ աշխատանքների և իրականացվող ծրագրերի շուրջ փորձի փոխանակումներ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված թեմաները՝

«Սփյուռքի հմտությունների փոխանցման և տաղանդների ներգրավման ուղղությամբ տարածաշրջանային փորձի փոխանակում» թեմայով ժողովին մասնակիցներին ներկայացվել է Հայաստանի փորձը հայկական սփյուռքի հետ տարվող աշխատանքներում: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել «իԳործ», «Դիասպրո», «Սփյուռքի երիտասարդ դեսպան» և այլ ծրագրերին ու նախաձեռնություններին, որից հետո տեղի է ունեցել հարց ու պատասխան:

Բացի այդ, հանդիպման ընթացքում տեղի են ունեցել փորձի փոխանակման քննարկումներ ժողովին մասնակցած այլ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ (Մալայզիա, Ինդոնեզիա, Թաիլանդ, Հնդկաստան, Մոլդովա), որոնց ընթացքում մասնակից երկրների ներկայացուցիչները ներկայացրել են իրենց ծրագրերը և փորձառությունները սփյուռքի ներուժի ներգրավման, մասնագիտական հմտությունների փոխանցման ուղղությամբ:

6. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Ժողովի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն Եվրոպական միության գլոբալ սփյուռքի հարթակի և Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի հետ՝ շարունակելու սփյուռքի հարցերի շուրջ համագործակցությունը, ինչպես նաև ակտիվորեն կիսվելու սփյուռքի ներուժի արդյունավետ օգտագործման վերաբերյալ փորձով՝ հատուկ ուշադրություն դարձնելով նորարարական մոտեցումների մշակմանը, ներառյալ սփյուռքի ներուժի ներգրավման գործընթացներում արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառմանը:

Նշված կենտրոնի հետ ձեռք է բերվել նաև պայմանավորվածություն՝ ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակին տրամադրելու ժողովի ընթացքում մասնակից երկրների ներկայացրած տեղեկությունները՝ հայկական սփյուռքի հետ տարվող աշխատանքներում դրանց կիրառությունը համադրելու և հնարավորությունները գնահատելու նպատակով:

7. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Ժողովի ընթացքում ներկայացված տեղեկությունները և ձեռք բերված պայմանավորվածությունները տասնօրյա ժամկետում կամփոփվեն և կքննարկվեն Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակում՝ ապահովելու համար դրանց շարունակական և նպատակային ընթացքը (պատասխանատու՝ Գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության պետ Կարեն Ավանեսյան): Նախատեսվում է ակտիվացնել և խորացնել համագործակցությունը Եվրոպական միության գլոբալ սփյուռքի հարթակի և Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի հետ՝ սփյուռքի ներուժի ներգրավման արդյունավետ գործիքների և մեխանիզմների ներդրման հարցերի շուրջ փորձի փոխանակման միջոցով, ինչը կարող է նպաստել սփյուռքի հետ հետագա գործակցության առավել արդյունավետ ծրագրերի մշակմանը:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

03.09.2025թ.